

ՊՐՈՖ. Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԴԱՎԻԹ ՔԱՀԱՆԱ ԶԵՅԹՈՒՆՑՈՒ ՏՈՄԱՐԸ

«Էջմիածին» ամսագրի 1952 թ. № 6-ում, «Ղուկաս Կեղեցու չափածո տոմարը» վերնագրով լույս ընծայած մեր հոդվածում, խոսելով Կեղեցու աշխատության պատվիրատուի մասին, մենք գրել էինք. «Կեղեցու տոմարի պատվիրատուն է հանդիսացել Դավիթ Զեյթունցին՝ տոմարի ուսումնասիրությամբ անչափ տարված մի անձնավորություն, որը նույնպես գրած ունի չափածո սեփական մի տոմար, որը հայտնի է դառել մեզ և նպատակ ունենք առաջիկայում հրատարակության հանձնելու»[1]: Այժմ ցանկանում ենք կատարել մեր խոստումը:

Դավիթ քահանա Զեյթունցին իր ժամանակի աչքի ընկնող մատենագիրներից մեկն է: Ժամանակակից հեղինակներից Հովսեփ գրիչ Երզնկացին նրան համարում է «Իմաստուն և հանճարեղ, քաջ հռետոր և անյաղթ փիլիսոփա»[2]: Իր ուսանողները ևս անչափ գովեստով են խոսում նրա մասին որպես վաստակաշատ ուսուցչի և գիտուն անձնավորության: Որքան էլ ժամանակակիցների տված գնահատականները չափազանցություն համարենք, այնուամենայնիվ նրանք ցուցանիշ են Զեյթունցու իր ժամանակ վայելած մեծ հեղինակության:

Դավիթ Զեյթունցու անձնավորության և մատենագրական ստեղծագործությունների մասին, դժբախտաբար, կցկտուր տեղեկություններ են հասել մեզ: Մինչև վերջերս հայտնի էր միայն նրա քերականական մի աշխատությունը՝ «Մեկնութիւն քերականի՝ արարեալ Զէյթունցի տէր Դաւիթ քահանայի» վերնագրով: Այս աշխատության մասին առաջին անգամ խոսել է բանասեր Հ. Հակոբոս Տաշյանը Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի № 84 ձեռագրի հիման վրա[3]: Այնուհետև նրան անդրադարձել է պրոֆ. Ն. Ադոնցը «Դիոնիսիոս Թրակացին և հայկական մեկնիչները» աշխատության ներածության մեջ[4]: Դավիթ Զեյթունցու քերականության ուսումնասիրությամբ զբաղվել է Հայկ. ՍՍՀ ԳԱ-ի ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանը և ըստ պատշաճին գնահատել այն[5]:

---

[1] «Էջմիածին», 1952, № 6, էջ 60:

[2] Վ. Հակոբյան, Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Ա, Ե., 1974, էջ 482:

[3] Հ. Հ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի Վիեննա, 1895, էջ 344 և 315:

[4] *Н. Адонц*, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, էջ XI.

[5] Գ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Ե., 1954, էջ 330:

Զեյթունցու մասին անհրաժեշտ պատմական տեղեկությունների բացակայության հետևանքով կարելի չի եղել ոչ միայն նրա անձնավորության մասին շատ ու քիչ տեղեկություն իմանալ, այլև մոտավոր ձևով պարզել նրա ապրած ժամանակը:

Ուսումնասիրողներից Գ. Ջահուկյանը Զեյթունցուն համարել է XIV—XVI դարերում ապրած հեղինակ՝ հետևյալ փաստերի հիման վրա. «Եթե նկատի ունենանք, որ Դավիթ Զեյթունցին օգտվել է գրչության արվեստի վերաբերյալ առաջին աշխատություններից, այլև Վարդանի և Երզնկացու երկերից, ապա պարզ կլինի, որ նա ապրել է 13-րդ դարից հետո. մյուս կողմից՝ եթե նկատի առնենք, որ նրա քերականական աշխատության ձեռագրերը 17-րդ դարի սկզբներից են (Տաշյանի հրատարակած ձեռագիրը, որ հնագույնն է, 1613 թվականից է), ապա կստանանք Դավիթ Զեյթունցու ապրած ժամանակի համար 14—16-րդ դդ.»[6]:

Վերջին տարիներս Զեյթունցու անձնավորության և ստեղծագործական աշխատանքի վերաբերյալ հայտնի դարձան մի շարք տեղեկություններ, որոնք հնարավորություն են տալիս որոշ պատկերացում կազմելու նրա ապրած ժամանակի և ստեղծագործությունների մասին:

Նորահայտ այդ նյութերից առանձնապես կարևոր է նրա չափածո տոմարը: Այդ աշխատությունից հայտնի դարձավ, որ նա եղել է ո՛չ միայն քերականագետ, այլև՝ տոմարագետ ու բանաստեղծ: Փորձենք նոր նյութերով պարզել մեր հեղինակի ապրած ժամանակը:

Ղուկաս Կեղեցու 1557 թ. գրած տոմարական աշխատությունից երևում է, որ նրա պատվիրատուն է եղել Դավիթ Զեյթունցին: Այդ մասին նա գրում է.

«Իսկ տէր Դաւիթըն Զեյթունցի,
Յինէն խնդրեաց, եւ ես գրեցի,
Ի ուրախութիւն մանկագունի,
Այլ յիմաստնոց պարսաւելի»[7]:

Եթե Զեյթունցին Կեղեցու գրելու տարում՝ 1557 թ., դեռ մանուկ է հիշվում, ապա նա եղած պիտի լինի ոչ ավելի, քան 20—25 տարեկան, հետևապես ծնված պիտի լինի XVI դարի երեսունական թվականներին:

Զեյթունցու տոմարի հիշատակարանից նույնպես գիտենք, որ այն գրել է 1609 թվականին: Այդ նշում է մեր հեղինակն իր հետևյալ քառյակում.

«Ի հազար ւ իսուն թվականի,
Եւ ոյթ թուով էր աւելի,
Ի ժամանակ բարեպաշտի,
Զիկմունտ քաջ քագաւորի»[8]:

Այդ հաշվով նա, տոմարը գրած ժամանակ, եղած պիտի լինի 65—70 տարեկան: Չորս տարի հետո պատվիրատու Հովսեփ Երզնկացու գրած ձեռագրի հիշատակարանից իմանում ենք, որ 1613 թ. Զեյթունցին դեռ կենդանի է եղել և գործուն մասնակցություն ունեցել տվյալ ձեռագրի գրության ժամանակ: Այդ մասին Երզնկացին գրում է. «...Բազում աշխատեցաւ ի հետ մեզ՝ ցայլ և զցերեկ ոչ դադարեաց, ոչ քուն աչաց և ոչ ինչ արտևանանց մինչև էհաս յաւարտ գրոցս... Գրեցաւ թվին ՌԿԲ (1613)»[9]:

Նիկոլ Տոմաժիրսքու 1615 թ. գրած ձեռագրի հիշատակությունից պարզվում է, որ Դավիթ Զեյթունցին արդեն մահացած է եղել, և նա խնդրում է բարի ողորմիսով հիշել նրան. «(Յիշեսջիք) զմիւս վարդապետն իմ հանգուցեալ զտէր Դաւիթ Զէյթունցի»[10]: Եթե նա 1613 թ. հիշվում է կենդանի, իսկ 1615 թ. արդեն մահացած, ուրեմն նրա մահը պիտի տեղի ունեցած լինի այդ տարիների միջև, հավանաբար՝ 1614 թվականին:

Զեյթունցու տոմարական այդ աշխատության մասին առաջին անգամ խոսել ենք մենք 1952 թ. առջև հիշված հոդվածում: Մեզնից հետո այդ աշխատությանն անդրադարձել է պատմական գիտությունների դոկտոր Վազգեն Հակոբյանը և հրատարակել Զեյթունցու հիշատակարանը[11]:

Տոմարական այդ աշխատությունը գրի է առնված Մաշտոցի անվան Մատենադարանի № 6731 և № 7001 ձեռագրերում: Առաջինը տոմարական նյութերի ժողովածու է, գրված Լեհաստանի Լվով քաղաքում, 1614 թ., Գրիգոր Տոմաժիրսքի գրչի կողմից: Հիշատակագիրը գրչության մասին հետևյալ տեղեկությունն է հայտնել. «Արդ՝ գրեցաւ գիրքս այս տումար մեկնիչս ի թվականին Հայոց ՌԿԳ (1614), և յունիս ամսոյ ԺԶ (16), օրն հինգշաբթի, ի մայրաքաղաքն Իլով ընդ հովանեաւ Նընջման սուրբ Աստուածածնին հայկազան եկեղեցոյ ի թագաւորության երրորդ Զիկմունտին և ի հայրապետութեան տեառն Մելքիսեդեքին ի վայլումն տէր Զաքարա(իա)յի սրբազան քահանային և յիշատակ ծնօղաց նորին...

---

[6] Նույնը, էջ 330:

[7] «Էջմիածին», 1952, № 6, էջ 63:

[8] Մատենադարանի ձեռ. № 6731, թ. 71ա:

[9] Վ. Հակոբյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա, էջ 482:

[10] Նույնը, էջ 546:

[11] Նույնը, էջ 332—333:

Արդ, անկեալ աղաչեմ զամենեսեանդ, որ հանդիպիք սմա կարդալով կամ յօրինակելով, մէկ հայր մերիւ յիշեցէք զանպիտան գրիչս՝ զԳրիգոր Տօմաժիրաքին»[12]:

Երկրորդ ձեռագիրը ընդօրինակված է Կ. Պոլսում, 1720 թ., Եսայի գրչի կողմից, ամենայն հավանականությամբ հիմք ունենալով Տոմաժիրաքու օրինակը[13]: Ինչպես առաջին, այնպես և երկրորդ ձեռագրերը, բարեբախտաբար, պահել են Զեյթունցու չափածո հիշատակարանը, ուր նա տեղեկություն է հաղորդում տոմարը գրելու թվականի, գրչության վայրի, պատվիրատուի և իր հետ միասին Կաֆա քաղաքում պաշտոնավարող հոգևորականների մասին:

Դավիթ Զեյթունցուն, որպես տոմարագետ, կարելի է դասել ուշ միջնադարյան տոմարագետներ Հովասափ Սեբաստացու, Առաքել Սյունեցու, Ղուկաս Կեղեցու և Վահան Զեյթունցու շարքին: Նա, իհարկե, Ծիրակացի չէ, ոչ էլ Հովհաննես Սարկավագ: Նրա աշխատությունը, ի տարբերություն իր դասի տոմարագետների, ուշագրավ է նրանով, որ տոմարական հաշվումները կատարված են ո՛չ թե հռոմեական տոմարով, որը 1320 թվականից հետո լայն քաղաքացիություն էր ստացել հայկական մատենագրության մեջ, այլ՝ ըստ հայկական տոմարական համակարգի: Հեղինակը, հետևելով անշարժ տոմարին, նահանջ տարին ավելի մեկ օրը դնում է ոչ թե հայոց ավելացաց ամսվա վրա, այլ՝ մեհեկանի: Կարևոր է նաև այն, որ նրան հայտնի է, թե հին հայկական շարժական տոմարում, նահանջ օրերը չհաշվելու հետևանքով, հայկական թվականի մեջ սողոսկել է մի ավելի տարի, ուստի նա առաջարկում է հին թվականը վերծանելիս ավելի տարին դուրս հանել տարեթվից:

Ի՞նչ արժեք ունի Զեյթունցու չափածո տոմարը: Այն, ամենից առաջ, արժեքավոր է հեղինակի ստեղծագործությունը լուսաբանելու, ամբողջացնելու տեսանկյունից. նրա քերականական աշխատության կողքին մենք այժմ ունենք հեղինակի տոմարական աշխատությունը: Զեյթունցու տոմարն արժեքավոր է նաև հայոց տոմարի պատմության համար: Այն ուսումնական ձեռնարկ է հանդիսացել. ուսանողները նրանով անգիր են սովորել, նրանով առաջնորդվել են տոմարով զբաղվող տասնյակ սերունդներ: Վերջապես, Զեյթունցու տոմարը կարևոր է նաև հայ գրականության և լեզվի պատմության համար:

Ուշագրավ է հատկապես այն, որ X—XIII դարերի հայ մշակույթի զարթոնքին հետևող XIV—XVII դարերի անկման շրջանում Հայաստանի այս կամ այն վայրում և գաղթավայրերում սկսում են ծլարձակվել անցյալի մոռացված գիտության որոշ բնագավառներ: Դրանցից է Դավիթ Զեյթունցու չափածո տոմարը:

[12] Մատենադարան, ձեռ. № 6781, թ. 187բ:
[13] Նույնը, ձեռ. № 4001, թ. 118ա—119բ:

68բ || Պատճէն Հայոց տումարան,
Զոր ի նախնեաց մեր պարզեցան,
Բայց ի Դա·թէս վանգ չափեցան,
Ոտանաւոր շարադրեցան:

Անո.անք ամսոցն հայկազան,
Նաւասարդի[1], հոոի աշնան,
Սահմի, տրէ, քաղոց ձմրան,
Արաց, մեհեկի, որ կան:

Եւ արեգի ամիս գարնան,
Ահկի և մարերի անցան,
Եւ յետ սոցա մարգաց ամռան,
Հրոտից[2] և աւելեաց լցան:

Կրկնակ ամսոց այսպէս զ·գին.
Կալցես զաւուրս նաւասարդին,
Եւթներ կերթաս զամենեսին,
Մընա կրկնակ հոոի ամսին:

Կալցես զհոոի ընդ կրկնակին,
Սոյնպէս առնես զամենեսին,
Բայց կիսակին քընան և ին,
Կէս աւելի երթն ընդ ընմին[3]:

Կրկնակ չկա նաւասարդի,
Երկուք հոոի և չորս սահմի,
Վեց է տրէ և քաղոց մի,
Երեք արաց, հինկ մեհեկի:

Դարձեալ կրկնակ չէ արեգի,
Ահկի երկուք, չորս մարերի,
Վեց է մարգաց և մէկ հոոի,
Եռ աւելեաց, այլ ոչ պիտի:

[1] Նաւասարդիք
[2] Հոոտից
[3] Ընդըմին

Կիսակ ամսոց այսպէս գործի.
Ի նաւասարդէ առաջ թուի,
Ամէն ամսից կէս կէս առցին,
Երկայ ամսոյն կիսակ կազմի:

Քանիք ամսոցն եռսուն լինի,
Այլ հինգ աւորք կայ աւելի,
Արդ մեհեկի ձմռան վերջի,
Թիւմ աւելու ի նահանջի:

Փոքր թուական այսպէս արայ.
69ա Կալ զթուականընն մեծ Հայ||կայ,
Թիւմ ա.ելի կայ ի նմա,
Ի բաց գնայ, որ ուղիղ գայ:

Շրջան որքան որ յաւելնայ,
Տասն որելեան զամէնն գնայ,
Ի եռսուն ։ երկուք այլ ընդ նոսա
Թիւ նոր տարուն է, զոր մնայ:

Եւթներրեակ այսգոն արա.
Կալ թվական և բաժանեա,
Քսան և ո.թ զամէնն գնա,
Տես թէ խոնարհ որքան մնայ:

Ամէն չորս թիւ մէկ աւելնայ,
Եւթն երթաս թէ ինչ մնայ,
Եւթնեակ տարուն առնես գնա,
Մի թուով պակաս, որ ուղիղ գայ:

Կալ զեւթներրեակ անցեալ ամին,
Թիւ մի աւել վերա նորին,
Եւթներրեակ ապագային,
Լինի առանց թվականին:

Բայց ի չորրորդ ամ նահանջին,
Ի եւթներրեակ լինի կրկին,
Մէկ մի ի մուտ նաւասարդին,
Երկ արեգի ամսայմտին:

Ամսամըտին կալցես թիւ մի,
Զեւթնակ տարուն զկրնակ ամսին,
Եւթներ երթաս որ վճարին,
Թէ մէկ մնայ՝ է կիրակին:

Եւ թէ երկու՝ երկուշաբթին,
Նոյնպէս երեք՝ որ ի կարգին,
Աւրագիտին կալ զաւր ամսին,
Եւ այլ որպէս ամամըտին:

Այսպէս արա վերադրին.
Կալ զթվական որքան լինին,
Տասնևիններ ձգես զինքնին,
Մնա խորանք վերադրին:

Տե՛ս թէ քանի է թիւն նորին,
Տասնումէկով բազմապատկին,
Եւ հանապազ ի բաց բառնին[4],
Եւ երեսնաւք ձրգէ զնոսին:

Քան զերեսուն որ ցած լինի՝
Այն՝ վերադիր ներկայ ամին,
69բ Լրում և ծնունդ|| ։ աւուրք լուսնին,
Սովաւ առնին ամենեսին:

Բայց ինն և տասներկու ամին,
Թիւ մի աւել վերադրրին,
Բախշեա զթուականն տաս և ինն,
Որ լիով գայ, այն է տարին:

Այլ ա.ելեաց աւրն վերջին,
Զինչ որ լինի գիր պատկերին,
Եւթնեակ է հանդերձեալ ամին,
Եւ զվերադիր քանիք լուսնին:

Վերադրով վերադրրին,
Կալ զվերադիր անցեալ ամին,
Մետասան բեր վերա նորին,
Նոր վերադիր ապագային:

Ծնունդ լուսնին առնես տարուն,
Կալ երեսուն թիւ կամ վաթսուն,
Զվերադրին երթ զկիսակ ամսում,
Մնա ծնունդ այնքան ամսուն:

Աւուրց լուսնին կալ զաւր ամսին,
Զկիսակ նորին զթեւ վերադրին,
Երդ երեսուն քան ա.ելի,
Մնացեալն աւուրք լինի լուսնին:

Լրումն այսպէս արա լուսնին.
Կալ քառասուն հինգ ընդ նմնն,
Երթ զվերադիր ընդ կիսակին,
Մնա աւուրք լրման լուսնին:

Առաջաւոր այսպէս շինեա.
Երեսուն ։ չորս թիւ արակա,
Ի նահանջին թիւմ աւելեա,
Եւ զվերադիրն ի բաց գընա:

Զմնացեալն արաց աւարագիտեա,
Ի կիրակի առաջ գնա,
Թէ կիրակի է աւր նորա,
Ի միւսն անցին, որ ճար չի կա:

Բայց ինն և տաս տարիքն որ է,
Նա մի անգամ այս պատահէ,
Որ վերադիր մի թիւ առնէ,
Առաջաւորն սխալի:

Ցորժամ երթաս ի յերեսնէ,
70ա Եւ չորս թուէ կամ|| և հնգէ,
Զմնացեալքն երեսուս ի բաց մերժէ,
Եւ զայլն արաց՝ աւրագիտ է:

---

[4] Բառին

Գիր բանաղեաց այս զայն հանէ.
Առաջաւորն որքան որ է,
Ցայտնութիւնէն առաջ թուէ,
Հընգիւ պակաս՝ գիր տարուն է։

Աւագ լրումն որ է զատկի,
Այսպէս արա ամէն տարի.
Կալ քառասուն թիւ ընդ չորսի,
Եւ զվերադիրն գնա ատի։

Թէ քան զերկտասան թիւ աւելի,
Մնայ տացես արեգ ամսի, –
Եւ թէ պակաս մինչև ի մի,
Անկի ամսոյն աւարգիւտի։

Պատկեր աւուր ինչ որ լինի,
Թուեա և տուր ի կիրակի,
Թէ հանդիպի ի կիրակի,
Ի միւս անցս՝ զատիք լինի։

Որ վերադիր մի թիւ լինի,
Երեսուն այլ ած՝ ոչ սխալի,
Ի քառ չորից ի բաց ձգի,
Զայլ արեգի տուր ի կարգի։

Քանիք զատկի թէ արեգի,
Ութ այլ աւել նուընպէս անկի,
Չորրորդ ամսոյն այնքան թուի,
Վարդավառին տաւն կատարի։

Քանիք անշարժ եղանակի,
Աւրագիւտով ըստուգ ցուցանի.
Ի հինգն ամսոյն նաւասարդի,
Տասն է փոխման Աստուածածնի։

Նոյնպէս ի հինգ աւրն հոռի,
Վերացման տաւն է[5] սուրբ խաչի,
Ի յինն աւրն աշունմտի,
Տիւ և գիշեր հաւասարի։

Տրէ ի ԺԱ աւարագիւտի,
Բարեկենդան յիսնակմտի,
Քաղց ի մի սուրբ Ցակոբի,
Բարեկենդան առ կիրակի։

70բ Սըմին ամսոյ ի տասընն||եկի,
Զմեռնամուտ դարձար և ի,
Զի բարձրանայ ի ձմերայնի
Եւ խոնարհի ամարայնի։

Ի քսան ու մէկն յայտնութենի՝
Բարեկենդան Հայոց ազգի,
Ի ԻԴ կաղանդ լինի,
Որ տարէմուտ է հոռոմի։

Ի ԻԹ ծնընդեան տաւնի,
Եւ մկրտումն է Քրիստոսի,
Նա և ի յութն մեհեկի[6],
Տեառն ընդ առաջ տաւն կատարի։

Ի ԺԲն արեգի
Գառնանամուտ հասարակի,
Ի Լ սըմեն ամսի,
Աւետիքն է Աստուածածնի։

Անկաստեղն է ի յութն աճկի,
Ընդ արևու շրջապատի,
Ի ԺԷրն մարերի,
Անկեալ աստղունքն որ երևին։

Եւ ի մարգաց տաս ւ երեքի,
Ամառնամուտ դարձար և ի,
Բարձր է կողմամբ հիւսիսապին,
Եւ ցածութիւն հարաւայնի։

ԶԱստուածածնին և զսուրբ խաչին,
Զիսնակ մտի սուրբ Ցակոբին,
Ի յետ դարձոյ զչորեքշաբթին,
Զհինգշաբթին տուր՝ ի կիրակին։

Այլ տանուտէր տարու ստուգէ,
Երկտասանաւք զթիւքըն ձգէ,
Զցածն Խոյէն առաջ բաշխէ,
Ցուր հասանի տարուն՝ այն է։

Տանուտէրանցն անուանք այս է.
Տունք աստեղաց սոցա ասէ,
Խոյն և Ցուլն, Եկաւորն է,
Եւ Խեցգետինն նահանջ է։

Առիւծ, և Կոյսն և Կշիռն է,
Կարիճ կրկին նահանջ բերէ,
Աղեղնաւորն, Այծեղջիւր է,
Ջրհոսն և Ձուկն նահանջ է։

Ի տասն և չորս արեգ ամսուն
Արեգակըն մտնու ի Խոյն,
Պարտ է զմի մի աւրն երեսուն,
71ա Զամէնն|| երեք հարիէր վաթսուն։

Արարչութեանըն հինգ աւուր,
Արեգական զատեղացըն տուր,
Լուծ ւ Եղջիւրի և ծնկաւոր,
Փառանձնոտի և Արտախոյր։

Կալ ի զատկէն մինչև ուր ես,
Ութ ութք կամ քառասուն ձրգես,
Առջի ձայնէ զինք բաժանես,
Եւ զձայն աւորն գտանես։

Ոտանաւոր այս տումարի,
Եղև Իլով մեծ քաղաքի,
Ընդ հովհանեաւ Աստուածածնի,
Հայոցըն սուրբ եկեղեցի։

[5] Տանէ

[6] Մեղիկի

Քահանայից սըրբազանի,
Տէր Գասպարին, տէր Խաչատրի,
Տէր Վարդանին՝ որ են ի սմի,
Որ քաջ հովիւ են սուրբ ուխտի։

Նաև Վանից միաբանի,
Կուսակրաւն քահանայի,
Եպիսկոպոս Ստեփանոսի,
Տէր Կարապետ մեծ հայրապետի։

Եւ տէր Վարդան աբեղայի
Եւ ընդ նոսին տէր Գրիգորի,
Որ սպասաւորք են սուրբ ուխտի,
Հաճկատար սուրբ Աստուածածնի։

Այլ՝ տէր Սահակ աբեղայի,
Որ հանդիպաւ ազամ տեղի,
Եւ այլ մանկաց սուրբ Սիոնի,
Սարկաւագաց ամենային։

Թորոս, Իւաշկաւ և Սիմոնի,
Եւ Զախնոյի բանասերի,
Որ աշխատին յետ սուրբ գրքի,
Մակացութեանց և ընդ ընրբի։

Որք բաղձացան սրմին իրի,
Եւ խնդրեցին՝ ես գրեցի,
Իմար Դաւիթս Զէթունցի,
Սակաւ տումարս ի ոտ հանի[7]։

Ի հազար ւ իւուն թվականի,
Եւ ութ թուով էր աւելի,
Ի ժամանակ բարեպաշտի,
Զիկմունտ քաջ թագաւորի։

[7] Խոտ հանի փոխ. ի ոտ հանի